ԿԻԼԻԿԻԱ

ՀԱՆԴԷՍ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ։ 1870, ՍԵՊՏԵՄԲԵՐ 7. ԹԻՒ 12.

ԱՌՈՂՋԱԿԱՆ

ԱՂՋԿԱՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՔՕՐՍԷՑԻ ԳՈՐԾԱՒՈՒԹԻՒՆԸ

Կիլիկիայիս նախորդ յօդուածներով աղջկանց դեղեցկութեան վերաբերեալ առողջաբանութեան վրայ խօսելու առնինս ըսինք թէ նոցա հագուստներուն առողջաբանութիւնն երեք կանոններ ունի և ունենալու է, ինչպէս են պարզութիւն, մաքրութիւն և ազատութիւն։

Այժմ մայրերուն, ծնողաց և մանաւանդ աղջկանց փիլիսոփայական դաստիարակութեան հակումներու կդիմենք և կըհարցնենք թէ արդեօք Առողջաբանական վերոյիշեալ երեք պայմանները կճանաչեն և հետևաբար ի գործ կդնեն։

Արդարև սոյն երեք պայմաններէն մանաւանդ մին, ազատութիւնն ամենէն կարևորն է առողջութեան նկատմամբ (բայց ո՛ր և իւ նկատմամբ կարևոր չէ այս ազատութիւնն).

բայց ապրիլք և մայրերը դիտալու են թէ, Քօրսէն այս ա-
զատութիւնը կարդելու : Եւ ահա ասոր, Քօրսէյին , ապրկանց
առողջութեան հաստացած ջնտանեբուն վրայ խօսելու վայր-
կեանն է :

Քօրսէյի վրայ շատ բժիշկներ , բազմաթիւ Առողջա-
բաններ խօսած են . մենք ալ երբև բժիշկ և առողջաբանու-
թիւնը սիրելի Ազգիս մէջ ընտանեցնելու փափաքող և
աշխատող տասը տարիներէ ի վեր , մեր կարողութեանն և
գիտութեանը ներածին չափ խօսած ենք, և այսօր երթ կրկին այս
խնդիրն յառաջ կբերենք , նպատակնիս սա է թէ, բժշկական
պաշտօն վարելէս ի վեր այս մասին փորձառնութիւննիս ա-
ւելցած , և Քօրսէյի գործածութենէն յառաջ եկած բազ-
մաթիւ հիւանդութեանց ականատես ըլլալնուս համար է :

Նախ ըսինք թէ Քօրսէյի գործածութիւնը բաւական
հին է Եւրոպական ազգաց մէջ. և սկսած է ԺԶ. դարէն :

Բըլաթներ , Վէնսը, Սօմմերվիվկ և այլն որք հռչակաւոր
բժիշկներ են, արժան դատած են Քօրսէյին վրայ գրել , և
ոչ միայն իրենց գրուածներովը դոհ եղած են , այլ փիլի-
սոփայից ուշադրութիւնն ալ առողջաբանական այս կարևոր
խնդրոյն վրայ գրաւած են :

Անշուշտ շատերու յայտնի թէ , ի՛նչ ազդու խօսած է
Ժ. Ժ. Ռուսօ , Դաղիացի փիլիսոփան : Քօրսէյի համղեալ
ոտիները մեծ իրաւունքներով և փաստերով խօսելով , ոչ-
բերդական պատկերի մը մէջ ներկայացուցին կուրծքին բը-
նական ձևերուն կատարեալ տեսակցութիւնը , լարդին տեղա-
փոխութիւնն որնոր չատ անդամ երկու բաժնուած է Քօր-
սէյին չափազանց սեղմուելուն . ստամոքսին ճնշումն ու վար
իջնալն և հետևաբար աղիքներուն . կուրծքին անշարժու-
թիւնն , որով շնչառութեան դաշտը կպղտիկնայ , և այն աս-
տիճան , որով կին մը , քօրսէյի կամ առանց քօրսէյի , իր
կուրծքէն օդ չանցընան . քանակութիւններ կարտաքսէ .
արեան հոսումներու մարմնիքներու , թոքախտի ենթակա-

յուխեան, սահանց սեղմուխեան, այն ատոիճան որ իր ձևը փոխելով, ապագային կաթ տալու անյարմար կըլլայ. Այլն, Այլն: Ա.Հա այս դժխաւոր ամբաստանութիւններն են, որք բռնած են քօրսէյին դէմ: Ա.րդարև ասանք խիստ իրաւացի և ճշմարիտ են, եթէ քօրսէն կարծր է և շատ սեղմէ, մնանալու եթէ շատ բարձր ելլէ. չափազանց եղած կըլլան եթէ քօրսէն վոխանակ կուրծքը սեղմելու, զանի կամ իոփէ, կգրկէ, եթէ կուրծքին վերի կողմը չնեղէ: Պ. Պուվիէ, Գաղղիացի բժիշկը, խիստ օգտակար դործ մը հրատարակած է, Քօրսէյի վրայ, որնոր ամբողջապէս թարգմանելով, Ա.զգային Տիկիններու, Օրիորդներու ներկայացնելու դիտաւորութիւն ունինք:

Փոքր աղջկանց համար, խիստ օգտակար է հասակնին կարծրացնել, կուրծքերնին և մկնքերնին դրկել քօրսէյով առանց զանի սեղմելու: Այս նպատակին հասնելու համար վոխանակ քօրսէ դործածելու, պէտք է կտաւեղէն բաճկոններ հագնեցնել սոխրել, որոնց բաւական ամրութիւն և կարծրութիւն տալու համար, իրարու խիստ բոթերով կարելու է: Յետոյ, երբ 12 կամ 13 տարեկան եղած աղեննին, երբ հասակնին բաւական երկննայ, և երբ ժամանակէն առաջ, խիստ չտառալ և մէկէն ի մէկ հասակնին երկննալով, կարող չըլլան մկնքերնին չիտակ բռնել, խիստ բարակ կեռի ոսկորներով չինուած քօրսէ մը դործածել տալը, խիստ առողջական և օգտակար խոկ է:

Հիմակուան շատերուն դործածած քօրսէն, նախնի ժամանակաց մէջ դործածուած քօրսէներուն չափ ջնասակար չեն: Փոխանակ կուրծքի եռևի կողմէն կապելու, որ խիստ դժուար դործողութիւն մը, կուրծքին առջևի կողմէն կըկապուի կարերու միջոցաւ. հիմակուան քօրսէն խիստ կակուղ է, և ոչ այնքան երկայն, և հետևաբար ատանց վրայ ջնասակար դործողութիւն չունի. այս պայմաններով, քօրսէն բնաւ ջնասակար չըլլար, մանաւանդ երբ չափազանց չեղմէ:

Իրաւ է որ մինչ պէտք եղածէն աւելի կսեղմուի, և շատ կմնեն, հին քօրսէյին կատարելիութիւնները և գործ դնելով, սափրելու են զանի քակելու համար, դէպի ետևի կողմը դարնուած ժապաւէնն առանց քակել։

Այդպիսի խիստ դիւրաւ կրնայ հասկցուիլ այսպէսի երկանակաւ գործածութեան վնասն ու վտանգը։ Իսկ օգտակարը և առողջական է այս ժապաւէնը բոլորովին չնկնելով, կամ լաստիկէ կամ բամբակէ լայն գօտան մը գործածել։ Այս մեթոտով աղկանց մէջքը միանգամայն կուրծքը դբբկուելով, ընչաւորութեան կարևոր եղոյզ չարժմանց աղատութեամբն, այն կակղութիւնն որ անհրաժեշտ է մարմնոյն ձևոյն չնորհալիութեանը։

Մեր այս ըսածներէն կրնայ հետևիլ բնականաբար, թէ մենք քօրսէյի գործածութեան թշնամի չենք, և չենք սպասկր որ նա բոլորովին չնկնուի, բայց ոչ առանց պայմաններու, զի մեք դիտաւորութիւնը կուրծքն առանց նեղելու դրկել սալ է և ոչ բանտարկել։

Մարդասէրն Յովհէլ Ր. առողջաբան եղած եղաւ, քօրսէյի չգործածութեան համար հրովարտակ մը հրատարակելուն, որով կհրամայէ թէ քօրսէին միայն գէշ բարուց տէր և բանտարկեալ կանայք գործածեն։ Թուաբէրի վերաբերեալ այսպիսի խնդրոյ մէջ մանելու ժամանակն անցած է. և այսօր մարդիկ կարող են քաղաքական աղատութեան օգուտները, հասակի աղատութեան օգուտներուն միացնել, բայց պէտք է որ այս աղատութիւնը դանուի։ Բայց աւաղ որ մեսայի կամ նորահաւատութեան աշխատութիւններն երթալով հիմակուան քօրսէն ալ հին ժամանակաց քօրսէյի կմօտեցնեն։ Այդմայրերն ուրնին որ նախանձէին իրենց աղկանը առողջութեան և աճման, ուշադիր ըլլան այս մեծ վտանգին։

Երբեմն, այսինքն վերանորոգութեան առեն, Քօրսէյի սովորութիւն չկար. բայց առասկ զգեստ կգործածուէր, որ Քօրսէյի նման մարմինը ամուր կպահէր. այսու ամենայնիւ

վանդը մի և նոյնն էր. և ոչ միայն վանդը մի և նոյնն էր, այլ և խիստ աւելի, որովհետև այս պղեսաը իր ձևին առթիւ մինչև կոկորդը բոլոր մարմինը սեղմելով բոլոր կուրծքը կնեղէր։

Մայրերը պէտք է աւելին, թէ փոքր աղջկանց համար խիստ վնասակար է Քօրսէն, մանաւանդ երբ զանի դուրծաճուի, նոյա չափահաս ըլլալու միջոցին։ Չի այն ատեն, նոյա կուրծքն, ամեն օր մեծնալու. լայնալու վրայ ըլլալով, գէշ ազդեցութիւն կընէ, նոյնպէս Քօրսէյի դուրծաճութեամբ ուսերին կըրցնելով, հասակնին այս եղանակաւ սեսակ մը ծռեւութիւն կստանայ։

Իրաւ է որ աղջկան համար մէջքի բարակութիւնը, նոյա դեղեցկութեան առաջին պայմաններէն մին նկատուած է, սակայն դիտելու է թէ, Ցոյն դեղեցկութեան մէջ այսպէս չէր, ընդհակառակն Ակռիպոլի Վէնուսին արձանին, ահա այս կէտը դեղեցկութեան նկատմամբ է, որ հիմակուան նորաձևութիւնը կպահանջէ որ կանանց մարմինն, երկու մասերու բաժնուի մէջքերնին Քօրսէյի. չափազանց սեղմելով։ Ուրիշ առողջութեան կամ օգտակարութեան նկատմամբ խիստ, ըսենք բոլորովին վնասակար է։

Ա.րդարև վտանգն ալ աւելի մեծ է, սա առթիւ թէ Քօրսէյիւ կուրծքերնին չափազանց սեղմելու սովորութիւն ունեցող կանայք լինչպէս Բէլիսօն, այնքան կսիրեն զանի, որ չեն կրնար առանց անոր ապրիլ։ Այլ սեղմուելու գիտութիւն, որ շուտ կծնի, բայց խիստ դժուարաւ կերթայ, կամ բոլորովին կմնայ։ Ա.րդարև շատ կանայք, այնքան կսովրին, որք ամեն օր մէկ մէկ քիչ սեղմելու են, շատերն ալ աւելի բարակ երևնալու համար, խիստ շատերն ալ առանց Քօրսէյի անցնիլ անկարող ըլլալնուն. պի առանց ասոր ստամոքսի նեղութիւն, կռնակի ցաւ, թուլութիւն կիմանան։ Ա.յսպիսի կանայք կնմանին, ամեն օր աքիսն ուսերու սովորեցնողնուն որք եթէ օր մը զրկուին այս թոյնէն, անմիջապէս կհիւանդ-

դանան ։ Սրդարև ոչ ախիճով մարմինը թունաւորելու է, և ոչ Քօրսէյիւ մարմինը խեղդելու է ։

Իբրև վերջին ղժուշութիւն սա հետևեալն ալ մայրերու և ծնողաց ուշադրութեան յանձնելով, Քօրսէյի վերաբերեալ այսօրուան ըսելիքնիս կվերջացնենք ։

Պիւռնա և իրեն նման շատ բժիշկներ բազմաթիւ փորձերով կապացուցանեն թէ, Քօրսէյի սովորութիւն ունեցող օրիորդք, ապագային մայր ըլլալու առեններին, մեծամեծ վտանգի մը ենթակայ կըլլան, որովհետև կըսէ, վերոյիշեալ մարդասէր բժիշկը, Քօրսէն աղջկանց նստարանի ոսկորնեռուն աճումը կարդիլէ, և հետևաբար որդեծնութիւնը կըդժուարացնէ ։

Հոս չենք կրնար համբերել և չըսել թէ չկայ դիտութիւն մը որ Սառողջաբանութեան նման օգտակար ըլլայ, բայց որչափ օգտակար է, այնքան ալ կարծես թէ, երեսի վրայ մնացած է, և ոչ մէկուն ուշադրութիւնը դրաւած. բայց պիտի ըլլայ այն օրն, որ մարդկութիւնն այս կենսապահիկ դիտութեան յարդը պիտի ճանչէ ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հերոդատի նախորդք. — Ցոյն գրականութեան սրճակ գրելու ծնունդը ։

Նախորդ յօդուածներով տեսանք թէ բանաստեղծութիւնը կամ թէ ըսենք ոտանաւորայ դործածութիւնը, նախնի Հելլենացւոյ համար անդեաղին յիշատակները պահելու և

յայորդ սերնդոց աւանդելու միակ միջոցն էր։ Բայց երթալով քանի որ ազգային աւանդութիւնք աւելի ճշդութիւն ունենալնին զգացուեցաւ, երթալով քանի որ, պահուելու արժանի դէպքերն աւելցան, բանաստեղծութիւնն իր վեհանձնութիւնը կորսնցուց, ինչպէս որ է Հոմերոսի մէջ, արդէն չափաբան բանաստեղծութեանց և Հեղիոսի տիեզերքի ոտանաւորներուն մէջ մեկ քիչ նուաստացաւ։ իսկ իր արժանիքն և ուժը չափաբական դրութեանց և զաւեշտ բանաստեղծից ոտանաւորներուն մէջ աւելի կորսնցուց։ Այսու ամենայնիւ արձակ դրութիւնը դրականական կենաց մէջ չէր կրնար ըստեղծիլ, առանց դրի դիւրին միջոց մը ընդունելու և ընդդէմ այս երջանիկ նորաձեւութեան դրեալ դրականութիւնն, իր ծնընդեան առեն ունեցած անյաջող պարագայից մէջ մեծ ուժ մը չէր կրնար ստանալ։ Այրպէս, չատ մեծ բան էր դասաբանի մը քարի վրայ անուն մը և թուական մը գծել կարող ըլլալն ալ. բայց դրողը մարմարիոնին կամ պղինձին վրայ չատ քիչ տեղ ունենալուն, դեռ այն առեն անյարմար գործիքներով այնպիսի կարճ մարմնոց վրայ փորագրելու դժուարութիւնը կրստիպէին այնքան համառօտ ընել, որ դրածը բաղդատիլն չոր կըլլար։ Այս առաջին յիշատակարանք մեծ ուշադրութեան արժանի են, ուր մարդկային խօսքը կուգէ տեսակ մը նիւթական և տեսանելի մշանջենաւորութիւն ունենալ, և որ ոտոյգիս մեզ կդիւրացնէ Եւրոպիոյ մէջ արձակի առաջին հեգեները լսել տալ. որով պէտք է խոստովանիլ թէ Թերայի կարճ դրուածքը, Սիժէ նեղուցինը որք իրրև ոտանաւոր ամենէն հին դրուածներն են, բնաւ երբեք դրականական որպիսութիւն մը չունին։ Բայց և այնպէս յոյն տաղանդը կարող եղաւ այս նեղ սահմանը մեծցնել, կամ Գրուածոց նոյն ինքն այն կայծութիւնէն օգուտ քաղել, զի ստիպեալ էր բանաստեղծական ոգին աւելի ուժով և պայծառութեամբ ցուցնել։ Ինչպէս որ ընտանեկան կենաց ամենէն պարզ գործիքներուս մարդս և վեհանձն ձև մը

կուտար, այնպէս ալ կարող եղաւ և դիտցաւ դերեզմանադրոյ մը կարճատեսութենադրին մէջ երբեմն ծանր և հայրենասիրական չունչ մը տալ, ինչպէս Օրրիբուսին դործին մէջ, կամ թէ Թերմոբիլի մէջ մեռնող Սպարտացւոց դործոյն մէջ, երբեմն հաճելի և դգայուն ոճ մը, ինչպէս է Սիմոնիտի մէկ փոքրիկ դործին մէջ. կամ թէ Ռամկապետի մէկ նոր հրատարակութիւնը :

Բայց, Յոյնը է. դ դարուն, Որբըզամբիքի տերութեան առեն Եդիպտոսի հետ յարաբերութիւններ ունեցան, Հելլէ դաշտին, դրչի նշանն ընդունելու և պահելու յարմար նիւթ մը բերին, որք էին Բաբիրուսի (ուսկից թուղթը կվինաւ) տերևներն կարծր, թեթեւ, աժան, և որուն տարածութիւնն յոյն աշխարհին մէջ, յետոյ Հռովմ աշխարհին մէջ անբաղդատելի հետեւութիւններն ունեցան, ինչպէս եղաւ տպագրութեան դիւտն նոր աշխարհին մէջ: Իր դործածութիւնն ըսաւ երաւամբ հին Բիբլոսը նոյն լինքն պատմութեան և լուսաւորութեան հետ կչփոթի :

Ուսոյ արձակ դրութիւնը ճիշդ այն առեն ծնաւ, ուր վերոյիշեալ Բաբիրուսի ամենայն առատութեամբ Յոյնաստան բերուեցաւ, և այս ալ պատահական համապատասխան մը չէ : Լուսաւորութեան պատմութիւնը մեզ նիւթին վրայ վոխադարձ դործողութեանց բազմաթիւ օրինակներ մեզ կուտայ. նոյնպէս և քաղաքական յառաջադիմութիւնք, որոնց համար արհեստական դիւտ մը կարևոր պայմանն ու պատճառն եղած է : Ան միջոցին էր որ կառնենք յոյն դրականութեան մէջ փիլիսոփայներ, բժիշկներ պատմաբաններ, որք ոտանաւորներու հին և սրբազան ձևը կթողուն, երևոյթ քննութեանց արդիւնքները հասարակ լեզուով յայտնելու :

Նախնիք դրչու արհեստին մէջ այս վոխադարձութեան պատմական կարևորութեան վրայ անարգանք չընեն. ինչպէս կը յայտնէ Պլուտարքոս իր մէկ դործոյն մէջ: Երբ բարք ու սովորութիւնք վոխուեցան, մարդոց հարստութեան և քնաւորութեան հետ, սովորութիւնն ամենեն առելի զեղուեցաւ,

երեկոյ մաղէ վրայէն ոսկիէ ճարտանոք հանեց, երկոյ ուսերէն բարակ կտաւէ շինուած վերարկուն, կարճցուց սերտ մաղէրն. այն առեն լեզուն ալ սովորութեանց հետ փոխուելով և իր գարշելը դուրս ձգուելով, պատմութիւնը, կառքէ մը ինկնալու նման, պատմութիւնն իր չափական ձևը թողուց, և արձակի ձևով է որ յայտնեց առասպելի ճշմարտութիւնը փիլիսոփայութիւնը նախապատիւ համարեց համզել պայծառութիւն մը երևակայական դիմաց տեղ, և այնուհետև արձակի ձևով է որ ճշմարիտը վճռեց. այն առեն Աստուած ալ Բիբլէն եւս կերևնել տուաւ ստանաւորով խօսիլն։ Այսպէս, նոյն ինքն նախնեաց խոստովանութեամբն, արձակի մշակութիւնը մի միայն ճաշակի պարզ յօժարութիւն մը չէ. այլ իր թուական և ծննդեան ինչպէս յառաջադիմութեան պայմաններն ունի։

ՅՈՒՇԻԿՔ

ՀԱՅՐԵՆԱՅ ՀԱՅՈՑ

Ի Հ. ՂԵՒՈՆԴԷ Ս. ԱԼԻՇԱՆ

Վ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ա.

ՆԱԽԱԲԱՆ

ԱՌ ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ... Ա՜յն քիչ առումներէն մէկն է այս՝ զոր դրեթէ ամէթ է բարեկիրթի և դպօն անձի մը, թէ և չըլլայ չատդէտ կամ բանիբուն. դրեթէ մոռքէն առած սիրտն կու

հասնի, կ'ըմբռնէ, կ'իմանայ զայն. կ'իմանայ զայն նաև երբ չիկրնար քիչ բառով կամ խօսքով բացատրել. մանաւանդ ուր քաղաքական և բարոյական տեսութիւնք՝ աստր իմաստն այլ այլայլած կամ զանազանած ըլլան:

Ա.րարածոց մէջ՝ որոնց հետ կապրի՝ մարդուս ամենէն յատուկ միանգամայն և ազնիւ ձիրքն է միտք կամ բանականութիւն. որ կ'ուզէ ըմբռնել, ճանչնալ, դատել. իր ծանօթութեանց դէխաւոր առարկայն այլ է նախ ինքն և իր նմանիքը. — մարդկութիւնը: Եւ ինչպէս չուտով մը կ'իմանայ որ ինքն իրրեւ մարդ ամեն մարդու հաւասարակից է, բայց ամենքն այլ իրմէ զատ զատ մարդիկ են, այսպէս այլ շուտ մը կու ճանչնայ կ'ընտրէ կ'որոշէ անոնցմէ բազմութիւն մը մարդկան՝ որք նման են իրեն այն ամեն բաներով՝ որով որ ուրիշներուն չեն նմանիր: Եւ ահա կու ճանչնայ զազգս. և անոնց մէջ իր հայրենիքը. և երկրիս բնակութեան վրայ ասոր բռնած տեղն այլ՝ Հայրենիք: Բնական է մարդուս վնտռտել և սիրել զՀայրենիս:

Ո՞ւր է հայրենիքն: Կայ ազգ որ ի սկզբանէ պատմական ժամանակաց՝ երկրիս նոյն կողմը մնացեր կեցեր է. այսինքն իր հարքն և նախահաւքն որդիէ որդի միշտ նոյն երկրին վրայ ծներ սներ մեռեր են. անոնց ձեռագործ յիշատակաց մէջ և մարմնոց նշխարացը քով՝ կու բնակին մինչեւ յայսօր իրենց վերջին ծնունդքն այլ. — կան ալ՝ որ ուրիշ տեղ ծներ են, և հիմայ ուրիշ տեղ կ'ապրին, և դուցէ ուրիշ տեղ մ'այլ պիտի մեռնին. իրենց որբանքն և դերեզմանքն հեռաւոր լերանց և դաշտաց վրայ ձգուած են, որոց միջոց՝ ուրիշ ազգաց աւելի երթալու մօտիկ որբոյք և և դերեզմանք կան. նման մեր Եփրատ գետոյն՝ որ Սեւ ծովէն հազիւ աստիճան մը հեռու Բարձր Հայոց գագաթներէն կու բղխէ, դէպ յարևմուտք և հարաւ վազելով՝ գրեթէ նոյնչափ կու մտնէ այ Միջերկրական ծովուն Հայոց ծոցը, և դարձեալ անկից այլ ճամբան փոխելով՝ դէպ

յարեւելս հարաւահասան՝ կ'երթայ կու թափի ի հեւաւոր ծոցն Պարսից ի ծով Հնդկաց։ Գուցէ այսպիսի ազգաց դըժար ըլլայ հայրենիքը ճշդելը։

Սակայն ո՛վ կայ՝ որ որչափ այլ պանդուխտ տարագիր և թափառական ըլլայ՝ չունենայ իր սկզբանը հաստատուն կէտ մը։ Երկրիս ծայրէն ի ծայրըն տեղափոխիկ օդաչու և ծովագնաց թռչունք անգամ, արագիլն և կռունկ և ծիծառունք և սադ, ունեցեր են տեղիկ մը բունիկ մը, թէ՛ աշտարակի մը ծայր, թէ՝ երդիքի մէկ խորշը, թէ՛ պատի մը ճեղքի մէջ, թէ բարձրածայր ծառոյ մը գագաթ; և թէ՛ վաղուկ կամ անչարժ չըլլ մը եղերք. այն է իրենց հայրենիքն. ուր՝ յետ աշխարհաշրջիկ և օդափոխիկ տարագրընացութեանց՝ կու դառնան նորածին ընտանեօք, և իրենց ախորժելի եղանակին մէջ երկրորդ անգամ ուրախ կեանք մը կ'անցընեն։ Մարդս ալ՝ որ չիգիտեր իր կենաց վերջին կէտը, ուր դադրին և ուր ընկնալն, վիտէ գտնէ իր սկզբնաւորութիւնը։ Կան որք դժբաղդաբար ծնողք ճանչցած չըլլան, բայց կու ճանչնան ծնելական տեղը, քաղաքը, գեղը. այն է իրենց հայրենիքը, և անոր հետ՝ նոյն օրէնքով վարուած տեղուանքն, եթէ ընդարձակ և եթէ ոչ։ Կան, ո՛հ խեղճութիւն մարդկութեան, կան որ չեն իմացեր չեն զգացեր լ՛ինչ է ծնողի մը ծոց, հարբոյր և գգուանք, չեն անած անոր կաթով՝ որոյ արեամբն ծնած են, չեն ճաշակած մօր մը քաղցրութիւն. եղբայր մը իրենց ձեռքէն չէ բռնած, և քոյր մը դիրենք չէ գրկած. սակայն և այնպիսիք ճանչցած և զգացած են զիւր և զքաղցրութիւն հայրենեաց՝ որ համատարած և անյիշաչար ծնողքի պէս կ'ընդունի կու գայ ամեն հասարդի և համակերոյ։ Տեսեր եմ իրեն ծագմանն անծանօթ երիտասարդն այլ՝ որ իրեն փառք և հաճոյք կու տեպէր պաշտպանել և մեռնիլ իսկ պաշտպանելով այն երկիրը՝ ուր ծներ ուր մեր էր, և ուր իրեն լեզուակից և կրօնակից նմանեցաւն հետ կ'ապրէր։

Ո՜հ, ի՜նչպես քաղցր եղած է անոր դարձը՝ յետ բաղմամեայ վիճաւորութեան, հեռի և տարբեր քաղաքաց և բերդից մէջ, և երբեմն յետ օտար աշխարհներ այլ մըտնելու բանակաց և պատերազմաց մէջ, յետ ղանդաղան դիպուածներէ և վտանգներէ անցնելու. — կամ անոր՝ որ աւելի խաղաղական բաղդի հանդիպելով՝ կամ ուսմանց կամ վաճառաշահութեան կամ ծառայութեան պատճառաւ, Ի'երթայ հեռաւոր աշխահներ և քաղաքներ, զանազան տեղորութիւնները, բարքեր, լեզուներ կու տեսանէ և կու տառնայ, և թէ՛ այսպիսի թէ նիւթական շահերու ծրարները կու բերէ այն քաղքին կամ դեղին մէջ՝ ուր իր կենաց առաջին տարիները և դիպուածները անցած են: Ո՜հ, աքանչելի կ'երեւին այն քաղքին այն դեղին հին և մեծ չէնքերը, իր զարգացութեան գաշտերը և ըլրակները. իր խաղաց և իր փոքրիկ հասակակից ընկերութեան տեղւոյանքը. այն որբատան և հասարակաց ժողովարանները՝ ուր Ի'ր ծանօթից և ընկերաց հետ Ի'երթար՝ նկեղեցւոյ կամ քաղաքային տոն մը, հանդէս մը, պարտք մը կատարելու, և զբաղութեամբ ու մխիթարութեամբ դառնալու: Ի՜նչ ծանրագին չէնք է այն չէնքը, այն տունը՝ ուր ծներ ու մեծցեր էր, և մանաւանդ այն՝ ուր որ ծներ էր: . . . Ո՜հ, այ խարհիս մէջ անկէ ցանկալի անկիւն կրնա՞յ ըլլալ. — եւս առաւել՝ եթէ ճանչցած այլ ըլլայ հոն իրեն ծնողք և հարազատներ. — և եւս առաւել՝ եթէ դեռ յոյս ունենայ զանոնք նորէն տեսնելու. — հապա թէ և դեռ տունը չքանած դտնէ այն հարազատները, այն ծնողքը՝ որ երբեք դինքը դիմաւորելու եկեր են, և իրարու դիրար գրկելնուն վրայ առած՝ կու բերեն իրենց ընտանեկան վառարանին կամ սեղանին եղերքը: . . . Հոս միայն ընտանեկան և խնամեկան քաղցրութիւն մը չէ. հայրենեաց դգացումն և սէրը այլ կայ հոս, որ դրեթէ ոչ պակաս դիւրի և ախորժ Ի'ըլլալ՝ նաև եթէ կենդանի յիշատակաց տեղ՝ միայն անկենդան յիշա-

տակարաններէ դանել. մանաւանդ եթէ անոնց մէջ ըլլայ և այն յիշատակարանը՝ որ մէկուն մ'է կենաց և մահու և անմահութեան. — Անշուշտ, եթէ կորսուած կամ պահուած ըլլար, բայց և կարելի ըլլար առակով դանելու և դնելու, բարեկիրթի սիրտն և պանդխտութենէն դարձած՝ առաջուած քին կէտն այլ կու տար առանալու համար սիրելւոյն և ընտանւոյն դերեզմանը:... Երբո՞ր արդեօք այնպէս անկիրք անկրօնք կարծրակուռ սիրտ մը գտնել՝ որ ըսէ. Ո՞նչ կ'ըներս, ո՛վ երիտասարդ, մինդհոս բաղդ աչխարհիս իր ղարմանալեաց և անկանելեաց դէպքը կու բանայ քեզի, դու այդ բաղդին օժանդակ առակդ այդպէս զուր կու վատնես, երկու կանգուն կաչտ հող մը, և քանի մը չոր ու պժգալի ոսկրներ դնելու, որոյ վրայ չկրնար մէկն նայիլ առանց ղողանջաց:... Աղօթենք, Հայկակ, որ այդպիսի ձայն մը քու և նմանեւացդ ականջին երբեք չհասնի:— Եղած անցած մարդկութեան ամենէն խղճալի թշուառ յիշատակը և նչխարն՝ արդարև իր մարմնոյն մնացորդն է. սակայն և քան զայն անդին, յանկալի և արբշռան բան չկայ երկրիս վրայ՝ այն մարմնոյն հաղորդակից կամ ատենակից ներկայ մարդու մը համար. և որչափ սիրելի են այն նչխարքն՝ այնքան և զանոնք պահող տեղն, հողաւազրն, դերեզմանն. ըլլայ հոյակապ մահարձանօք չքերիմ մը, ըլլայ պարզ քար մը, կամ բնաւ անքար տափակ հողն, քանի մը ծաղկով, կամ լոկ կանաչ խոտով պատած, և երկճիւղիկ փայտով՝ սև խաչով մը նշանուած:— Ծննդեան տեղն կամ ծնիկն, և նախնեաց դերեզմանն՝ մարդուս երկու հատիկ կէտերն են, որոց մէկուն վրայ պէտք է կեցընէ կարկինը՝ այն սիրտն որ կ'ուզէ ծրագրել տահման մը իրեն հայրենեացը, եթէ չերեսեր ուրիշ տահման:

Վերանքերնիս արդարև կարճ ընթացք մ'է երկու ծնեալ նատանց մէջտեղ. առջինն՝ օրոց, երկրորդն հողոց. կամ թէ կընայ ըսուիլ՝ Ծնարան և Գնարան: Սակայն մարդ միթէ

միայն ծնանելո՞ւ և մեռնելու համար եկած է յաշխար։ — Ոչ. մարդս խոհուն և գործուն էակ է. թէ և քիչ բան կրնայ ընել և քիչ միջոցի մէջ, մէկ ինչան մը ընելու չափ. — բայց այդ միջոցն, այդ ընթացքն, և մանաւանդ այդ գործքն է զհայրենիս բովանդակող։ Եթէ գործն չըլլար՝ ոչ ծննդեան և ոչ մահու յիշատակը այնպէս սիրելի և արժանի կ'ըլլային մարդկան. կամ երբած գործքերնուն կամ յուսացուած ընելի գործոցն համար է՝ որ այնպէս սիրելի և ցանկալի են մեզ յիշատակը և դերեզմանք հանգուցելոց։ Ուրեմն թէ և հայրենեաց կէտք և կենդրոնք կ'երևին այդ ծնարանքն և քնարանքն, սակայն անոնցմով կ'ենթադրուի գործոց յիշատակն, որ է բարոյական կեանք և մարդու և ազգի, որով և հայրենեաց իսկ։ Ուրեմն աւելի կերպով մը հոն են հայրենիք՝ ուր որ մեր արենակից և լեզուակից գործերը են. եթէ ծննդեան և մանուանդ դիպուածական և կերպով մ'ակամայ յիշատակարանքն իսկ այնքան սիրելի կ'ըլլան, ո՞րքան աւելի քննելի և վերաուելի են կենաց յիշատակարանքն՝ ուր ալ որ գործուած ըլլան, եթէ ի սեփական և եթէ յօտար երկրի։ Վասն զի կրնայ ըլլալ որ մեկն քաղքի մը մէջ ծնած և մեկէն փոխադրուած ըլլայ ուրիշ տեղ մը, հոն ապրած և գործած, յետոյ ուրիշ քաղաք մ' երթալով՝ հոն այլ մեռած. այսպէս այլ կրնան դասուիլ ժողովուրդք՝ որ երկրի մը ծագերն են, հինայ ուրիշ երկրի մէջ կու բնակին. բայց երենց և երենց նահապետաց մէջին սերունդքն այլ շատ երկայն աւուն՝ ուրիշ երկիր մը բնակած ըլլան. այս մէջին երկիրս կրնայ աւելի երաւամբք մ'իրենց հայրենիք ըսուիլ, կամ ինչպէս սովորութիւն է ասանկ առթիւ մէջ անուանել՝ երկրորդ հայրենիք։ Սոյդ է որ ուր երկրորդ և երրորդ հայրենիք ըլլան՝ կրնայ սիրտն տարակուսիլ և տարուբերիլ. սակայն և այն աւուն հոն կու հանդչի՝ ուր որ աւելի գործոց յիշատակ դանէ։

Որչափ փափաքելի, ո՛րչափ բարեբաստիկ է անոնց վիճակն՝ որ մեկ աչքով կու տեսնեն իրենց լիլևանին երկու հանդոյցներն ալ, ծնարանը և քնարանը, հանդերձ միջոցովն՝ որ կրնար ըսուիլ Գործարան։ Որչափ բարեբախտ է, կ'ըսեմ, այն աղջն՝ որ ի սկզբանէ ի վեր իր հարևելեզու նախնեաց երկրին մէջն է կեցեր. անկէց դուրս տեղ չիպըտներ իր նահապետաց ծնարանը, և հոն կու տեսնէ անոնց քնարանը. ինչպես առանձին մարդ մը՝ որ բնակի այն տունը՝ ուր իր հարքն և պապքն այլ բնակեր են, և պատրաստէ իր մարմնոյն վերջին հանգստարանը հոն՝ ուր որ այն հայրերն և պապերն այլ կու հանդչին դարերով. ուր իրենց վրայ հովանացեալ ծառոյն վոքրիկ տերևոց նման՝ որդիք ղորդիս վոխանակելով՝ քանի մը կամ չատ ցեղեր իրարու եռւէ ընկեր մնացեր են։ Արնանք նախանձելի սեպել երկրիս վրայ այդպիսի ազգի մը բաղդը, որ կու յայտնէ թէ կամ օտար բռնութիւններէ ազատ է մնացեր, կամ մանաւանդ՝ կրցեր է դինքը պաշտպանել անոնցմէ. իրեն նախնեաց աւանդը պահեր է անոնց նչխարացը քով. հայրենեաց ղպացումն պէտք է որ չատ ղօրաւոր ըլլայ այն ազգին վրայ, ինչու որ աչքին այլ կու տեսնէ անոնց յիշատակարանները, կու պտըտի անոնցչափած աստարիպլին մէջ, կու դործէ հոն՝ ուր անոնք դործեցին. իր կենդրանն և սահմանքըն յայտնի են. հայրենեաց ամեն տեսակ իմաստքն այլ ամիսխուած են մեկ գծով բոլորած սահմանի մէջ. գիծ մը՝ եռանկեան մը պես կու միացընէ իր և իր նախնեաց ծնարանին, քնարանին և դործարանին կէտերը։ Արնայ այնպիսին չդիտնալ իր ազդաբանութիւնը, իր հարց կարգաւյալորդութիւնը. բայց դիտէ որ հաղար տարիով այլ առաջ իր նախահայրն՝ այն երկրին մէջ բնակեր է. հոն է եղեր իր բոլոր ազդատոհմին նահապետն կամ ազդապետն այլ. և ինչպես հիմայ իր համազգի ընկերներն են՝ որ այդ դեպինը կու մշակեն, այսպես երկայն դարերով այլ առաջ՝

նոյն արիւն և նոյն լեզուն ունեցող ընկերակիցքն՝ նոյն հողէն նոյնպէս իրենց մնունդ կու հանեն և նոյն հող կու դառնան եղեր .–դիտէ որ այն մեծամեծ ծառերն՝ որոնց տակ քանի մը հատակ ղիրար յաջորդելով նստեր են, իրեն նախահայր անկածներն են, որոնք նոյնպէս իրենց նախնեաց հինաւուրց ձեռամանկոց տակ խաղցեր և հանդչեր են . –այն ապառաժ լեռներն՝ իրենց կողերէն ընծայեր են իր քաղքին և աշխարհին ամենէն հին շէնքերուն նիւթերն այլ, որոց ճարտարապետական ձևն և արձանագրութիւնք՝ դեռ իր հիմնակուռ ոճն և լեզուն կու յիշեցնեն .–այն հին կամուրջը՝ վայրենի ձորակի մը վրայ ձգուած՝ իր գեղին քանի մը երջանիկ նահապետաց ձգածն է .–այն մեծամեծ և հաստատակայ կրօնից շէնքերն՝ իր նախնեաց բարեպաշտութեան և մեծագործութեան վիշտաւկներն են .– այն բարձր և քանդակատարդ կառոյցն և կոթողքն՝ իրեն նախնեաց քաջութեան ցուցակքն են և յորդորքն անոնց նմանելու .–այն դաշտերն՝ ուր երբեմն պատերազմաց դրօշք բարձրացան և երբեմն ընկան իրենց դրօշակաց և անոնց հետևէն դայդողաց հետ . ուր երբեմն յաղթութեան թմբուկքն բոմբիւնին, երբեմն յաղթուելու և ետք քաշուելու պատակաւոր փողն հընչեց, այն ամենն այլ իր նախնեաց լեռ՝ արդեամբ քեռ՝ քրտամբ ոռոգուեր են : Եթէ լսնապ հոն և եթէ լայ՝ անցեալ յիշատակաց համեմատ, լսնաուն այլ լայն այլ ոչ միայն սիրով են, այլ և վառօք . վասն զի քաջութեամբ կռուիլն և պաշտպանելն ատելի արժանաւոր է՝ քան յաղթող գանուիլն . միշտ վառք ու պարծանք է իր երկիրն և իր աղգը սեփական լեզուաւ և օրինօք պահելն .–ունենալ յատուկ և բնիկ լեզու մը, սահման մը, քաղաքավարութիւն մը, ծէս մը, և յիշատակարաններ, որոնց համար բարեկամ բարեկամի հետ խօսելով կարենան ըսել մերը . այս կատարեալ հայրենիք է, երկիրս որ կոչեն այլ որ ըլլայ, ինչ դիրք այլ որ ունենայ :

ՏԻՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ

ՏՕՔԹՕՐ Մ. Ը. ՆԻԹԻՒՃԵԱՆ

ԳՐԱՍԵՆԵԱԿՆ Է, ՎԼՔԻՐ ԽՍՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ ԹԻՒ 21

Կ. ՊՕԼԻՍ. Ի ՏՊԱՐԱՆԻ Տ. Կ. ԱՍԼԱՆԵԱՆ